

գինքը՝ որպէս զի ժամանակ մը այնտեղ մնալով էայ. Եկեղեցւոյ ծէսերը և վարդապետութիւնը պէտք եղած կերպով սորվի:

— Եղեսիոյ մեր («Արեւելք») թղթակիցը հետեւեալները կը հաղորդէ մեզ յուլիս 29 թուականով. — Այս անգամ գոհութեամբ իմացանք, որ Պատրիարքարանի նպաստից Թանգնաժողովը որոշեր է անմիջապէս մէյ մէկ նպաստելով նախակրթարան բանալ նաև Եղեսիոյ վիճակի Պիրէճիկ-նփրատ գիւղաքաղաքին և Հոռմ — Այսի մերձաւոր ճիւղին գիւղին մէջ, Մեծապէս գնահատելի են սոյն որոշումը՝ քանի որ կը միտին մայրենի լեզուին գիտակցութեան զրկուած միջավայրերու մանկանց կրթութեանը օգնելու:

— Հիւանդանոցի հոգաբարձութիւնը կը ծանուցանէ հետեւեալ նուիրատուութիւնը. — Ազն. Յիկնայք ճանրման, Պաղտատլեան, Բրթօրօթօֆ և Բէյրեան իրենց հանգուցեալ մօր Յիկին Թագուհի Գ. Ներսէսեանի անուան տարեդարձին առթիւ քառասուն օսմ. ոսկի Հիւանդանոցի նուիրել բարհաճած ըլլալով, Հոգաբարձութիւնն յանուն ընդհանուր պատասպարելոց իր խորին շնորհակալութիւնը կը յայտնէ առ բարեսէր նուիրատու և կը յաւելու թէ ըստ փափաքանաց իրենց, յառաջիկայ կիրակի Ս. Աստուածածնայ Աերափոխման տօնի օրը հաստատութեանս Ս. Փրկչի մատրան մէջ յատուկ պատարագ և հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի և այս առթիւ ընդհանուր պատասպարելոց հոգեհանգ պիտի տրուի:

— Պատրիարքարանի ուղղուած նամակ մը կը ծանուցանէ, թէ Մեծուխայ վանքէն հինգ դարու հնութիւն ունեցող արծաթապատ գրչագիր Աւետարան մը, որ անուանի էր գիրին և զարդադիրներու գեղեցկութեամբ, և որ մեծ Խաչի մը հետ մէկտեղ կորսուած էր, վերջերս գտնուեր է առաջն. փոխանորդ Բագրեանդեան Սահակ Ծ. Վարդապետի ջանքով:

— Բւերակն հանդիսի հրատարակութիւնը դադարեցաւ լրագրական վերատեսչութեան հրամանաւ:

— Իտալիոյ մայր—թագուհին իր քաղաքային տան դիւանապետին միջոցաւ հեռագրաւ շնորհակալութիւն յայտնած է Ս. Պատրիարք Հօր ցաւակցական հեռագրին համար:

— Երուսաղիմայ ժառանգաւորաց վարժարանի ըննութիւնները աւարտեր են, Այս տարի 9 շրջանաւարտ ունի, որոնք ուսած են հետեւեալ ճիւղերը, Հայերէն՝ քերականութիւն, Ճարտասանութիւն, եկեղեցական՝ հին և նոր կտակարանի պատմութիւն, ուսողութիւն, աշխարհագրութիւն, տիեզերագրութիւն, (այս դասերը աւանդած են Տ. Սահակ եպիսկ. Խապայեան), հին և նոր կտակարան, չորս աւետարաններու մեկնութիւն (դասախօս Տ. Մամբրէ եպս.), բնագիտութիւն, հայերէն,

Ֆրանսերէն (դասախօս Կարապետ Ա.), գեղագրութիւն (Յարութիւն Ա.), թուրքերէն և երաժշտութիւն ձայնագրութեամբ (Պ. Սողոմոն Գրիգորեան) պատմութեան զանազան ճիւղեր՝ (Գէորգ սարկաւազ), ֆրանսերէն (դասախօս Մ. Ելթորոս հրեայ), Շրջանաւարտք աւարտական ճառեր գրած են՝ կրօնական նիւթերու վրայ, Ժառանգաւորաց վարժարանի ընթացաւարտներու համար հոգեւորական ասպարէզը մտնել պարտաւորիչ չէ այլ իրեր դպիր, քարտուղար կամ ուսուցիչ 3 տարի պիտի ծառայեն վանքին և ապա ազատ ըլլան դուրս ելլելու և ուզած գործերին ընտրելու: Այս տարուան շրջանաւարտները ամսոյս վերջերը պիտի շնորհակալուին Սուրբ տեղերը, դպրութեան պաշտօնով:

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՕՐԹՈՂՈՔՍ ԵԿԵՂԵՑԻ.

ՌՈՒՍԱՅ ԵԿԵՂԵՑԻ

Ներկայումս Ռուսաց եկեղեցական նուիրատուութիւնը կազմուած է 67 թեմ, 115 եպիսկոպոսներով: Սոցանից մետրապօլիտ են 3, արքեպիսկոպոս 15 (1 էքզարխի տիտղոսով), եպիսկոպոս 97 հոգի: Ս. Սինօզի անդամներ են 5 (մետրապօլիտներ, էքզարխ և նովոօրօդ. եպիսկոպոս), Սինօզու մշտապէս ներկայ եղող անդամ եպիսկոպոս 2, Սինօզի հերթական անդամ արքեպիսկոպոս 2: Երեք մետրապօլիտ, 14 արքեպիսկոպոս և 50 եպիսկոպոս վարում են թեմական առաջնորդութեան պաշտօններ. 1 արքեպիսկոպոս և 9 եպիսկ. արձակուած են թեմակալութիւնից, որոնցից ոմանք վարում են սինօզական Ատեանի (Синодальная контора) անդամութիւն, վանահայրութիւն և ոմանք ևս վանքերի միաբան են: Մնացած 57 եպիսկոպոսները վարում են իրեն—թեմակալութեան և յաջորդութեան պաշտօններ:

Մետրապօլիտական թեմերում յաջորդներ կան՝ իւրաքանչիւրում 3, 5 թեմում՝ երկ—երկուս (Վօլ., Թիֆ., Խերս., Ղազ., և Վիստի.), 25 թեմում մի—մի, որոնցից 4 յաջորդութիւն թափուր է (Տամբ., Թուր., Սարատ., Տօբօլսկ), 3 յաջորդութիւն վայելում են կէս—անկախ թեմակալութիւն (Վիլնիսուս., Սարապուլ., Ռիվելի՝ ճապոնիայում) և 3 թեմ. առաջնորդութիւն կախումն ունին էքզարխից (Իմերետ., Գուր.—միջգրել., Սոխում.):

Կրթութեամբ 115 եպիսկոպոսներէ 22/25

մասն աւարտել են հոգևոր դպրոցներ և միայն 5 հոգի—աշխարհիկ դպրոց. 4 հոգի ունին հոգ. ճեմ. վարդապետի (ДОКТОРЪ) աստիճան, 40-ը աստուածաբանութեան մագիստրոսի, 57 աստուածաբանութեան թեկնածուի (КАНДИДАТЪ), 8 հոգի դպր. ուսանող, 1 ժառանգաւորաց դպրոցից (Ի մերտ.), ապա 3 հոգի համալսարանական թեկնածու (Գեր. Փրուեան, Մարիելլ և Սերգի), 1 աւարտել է զինուորական ճեմարան (զեր. Իւլիենալի), 1 երկրագործական դպրոց (զեր. Արսէնի՝ Սուխ.), 2 սինչէ հոգևոր ճեմ. մասնէր սովորել են քարձր. աշխ. դպրոցներում (զեր. Պետր և Անաստասի) և 6 հոգի հոգ. ճեմ. են մասէլ դեմնագիտներէց:

Քարելով՝ 5 արհի 80 տ. անց են (զեր. Յովնաթան, Պոլիսիկ, Բենիամին, Ամբրոսի, Նէօֆիլ). 20 հոգի՝ 80—78 տ., 35 հոգի 70—60 տ., 17 հոգի՝ 60—50 տ., 25 հոգի 50—40 տ., և 13 հոգի 40 տ. փոքր. ամենից երիտասարդներն են 35 տարեկան (զեր. Տիկոն և Գերման), 2 եւս յիշուած իւրեքով աւագագոյններն են՝ Գեր. Մետր. Ի Իօաննիկի, Իօնաթան և Թէօդոսոս (ձեռնադրուած 60-ական թուերին): Ամենից աւելի հոգևորական կայ Պետր., Մոսի, Նովգոր., Վլադիմ., Տուլ., Տամբ., Օրլով., և Պոլտաւայի նահանգներէց:

Թեմերն ըստ տարածութեան, բազմամարդութեան և եկեղեցիներէ շատութեան՝ բաւական բազմազան են. կան թեմեր, որ 3 1/2 միլ. քառակ. վերստ տարածութիւն ունեն, բայց հազիւ 200 հաղար բնակիչ և միայն 100 եկեղեցի. կան թեմեր 3 1/2 միլ. բնակչով, 1000 եկեղեցով, 100 հաղար քառակ. վերստ տարածութիւնից աւելի փոքր սահմանով, 67 թեմերից միայն 55 ունին հոգ. դպրանոց (Дух. Семин.) (Մոսկ. թեմում 2). 57 թեմ. դպրոցներէց 22-ի մէջ տեսուչները վարդապետներ են, մնացածներում՝ աւագ—քահանաներ: Թեմեր կան որ հոգ. դպրոց (училище) անգամ չունին (Վլադիմիր., Սուխում.):

Պէտք է նկատել, որ վերջին 20 տարուայ մէջ թեմական դպրանոցներէ թիւը բաւական շատացել է. բայց թեմերի թիւը դեռ 70 չէ հասել, ինչպէս դեռ ևս Քէօտոր Ալէքսէիսի թաղաւորն էր կամենում հաստատել:

— Մոսկուայի հոգ. ճեմարանի տեսուչ Գեր. Արսէնի եպիսկոպոսը իւր օգնականի և ճեմարանի մի քանի ուսուցիչներէ և ուսանողներէ հետ այս ամառ ուղևորուեցաւ Ս. Երկիրը յերկրպագութիւն Նոր իրական տեղերի, ուր հասել են յունիս 23-ին: Այցելել են Երկրով, Յորդանան, Մեռեալ ծովը, Բեթղէհէմ, Բէտ—Ջալու, Մամբրէի Վաղնիս, ուր զիշերային հսկումն է կատարուել և պատարագ մատուցուել: Երուսաղէմում մանրա-

մասն դիտել են Ս. Յարութեան տաճարը, հնութիւնները, շրջակայքում՝ Գեթսեմանի պարտէզը, 2 թիթենեաց լեռեր, Օմարի, Էլ—Էքսի մզկիթները: Ներկայ են եղել և սրբազան քաղաքի պատերի առաջ կատարուող հրէական ողբին: Ճանապարհորդները Նազարէթ մէկնելուց առաջ բաժանուեցան մի քանի խմբակներէ, որոնցից մի քանիսը ուղևորուեց Աղէքսանդրիա, մի քանիսը Ռուստատան և մնացածները Գեր. տեսչի և տեսչի օգնականի հետ անցան Նազարէթ՝ դիտական հետազոտութեանց համար:

— Պիեի հանգուցեալ Իօաննիկի մեարոպոլի տեղ օգոստ. 13-ին Վայսերական հրովարտաւոր Նովգորոզի և Ստարո—Ռուսի արքեպիսկոպոս Թէօդոսոսը հաստատուած է Պիեի աթոռի մեարոպոլիտ, որի առթիւ և արժանացել է Վայսերական շնորհի՝ ստանալով թաղի խաչ և սպիտակ վեղար:

Նոր մեարոպոլիտը Ռուսաց աւագագոյն և արժանաւոր եպիսկոպոսներէց մէկն է. ծնուել է Տիլերի նահանգում, քահանայի որդի է, բարձրագոյն կրթութիւնն ստացել է Ս. Պետերբուրգի հոգ. ճեմարանում: Աւարտելուց քիչ առաջ հէնց՝ 1853 թ. մարտի 14-ին ընդունուած է կուսակցոն վիճակ. մարտի 25-ին ձեռնադրուած է սարկաւագ, իսկ սեպտ. 6-ին արեղայ:

Իւր հոգևոր գործունէութիւնն սկսում է Նովգորոզի նահ. Պիլիլովսկի հոգ. դպրոցի վերականգնութեամբ. մագիստրոսի աստիճան ստանալուց յետոյ՝ նշանակուած է Ս. Պետ. Ալէքսանդրո—Նեակի դպրոցի տեսուչ. 1858 թ. հոկտ. 24-ին ստանում է վարդապետութիւն: 1861 թ. Թէոդոսոս վարդապետը նշանակուած է Օրլովի հոգևոր դպրանոցի տեսուչ և 64 թ. փոխադրուած է Նոյն պաշտօնով Պոդօլսկի դպրանոցը: 1866 թ. դեկտ. 13-ին Վայսերական հրամանով նշանակուած է Բալտեան երկրի եպիսկոպոս և Պոդօլսկի թեմի փոխանորդ: 1870 թ. ստանում է Աստրախանի թեմի ինքնուրոյն վարչի պաշտօն. 1874 թ. նշանակուած է Պոդօլսկի և Բրացլաւսկի թեմի եպիսկոպոս, իսկ 1878 թ. Վլադիմիրսկի և Սուդզալսկի թեմակալ, ուր մնաց 14 տարի: 1883 թ. մայիսի 15-ն մասնակցում էր Աղէքսանդր III-ի թագադրութեան հանդիսին, որի համար և արժանացաւ արքեպիսկոպոսութեան տիտղոսի: 1892 թ. նոյեմբ. 26-ին Թէօդոսոս արքեպիսկոպոսը ստացաւ Նովգորոզի աթոռը, որտեղ նորա ամենանշանաւոր գործերից մէկն եղաւ Նովգորոզի հնադարեան սրբավայր Ս. Սօֆիայի տաճարի (հիմնադրուած 989 թ.) հիմնական վերանորոգութիւնը, որի օժման հանդէսի օրը և արժանացաւ Վայսերական վերջին շնորհին:

Իբրեւ Ս. Սինօզի անգամ սրբ. Թէօդոսոսը

սկսում է մասնակցել 1877 թուից, երբ Պօղոսյեպիսոպոս էր գեռ ևս: Այնուհետև երկու անգամ ևս հրաւիրուեցաւ՝ մէկը Վապիւմիւրսիկց և միւսը՝ Նովոքոզի թեմակալութիւնից մասնակցելու Ս. Սինօզի նիստերին: Իսկ 1895 թ. v/6 նը շանակուեցաւ Ս. Սինօզի մշտական անդամ:

Պաղեստինում Ռուսական եկեղեցու քարոզիչները թէև այն մեծ ազդեցութիւնը չունենին որ բողոքականութիւնն ու կաթոլիկութիւնը, բայց ի նկատի ունենալով նորա համեմատաբար նոր կազմութիւնը՝ կատարած գործունէութիւնն զգալի է: Ռուսաց առաքելութեան գործը մի մեծ առաւելութիւն ունի, որ ուրիշները չունեն այդ այն է, որ շնայելով բողոքական և կաթոլիկ եկեղեցիներին ընդհանուր շահերին, բայց և այնպէս անգլիացի, իտալացի, ֆրանսիացի, գերմանացի քարոզիչներին գործունէութեան մէջ երբեմն երևում են և ազդայնական շահեր, այն ինչ Ռուսական Վապիւրսիկց Պաղեստինի Ընկերութեան կազմը ազատ է այդ թոյլ կողմից ամբողջապէս ռուսաց ձեռքին լինելով: Այդ ընկերութիւնը 16 տ. է, որ գոյութիւն ունի և այդ կարճ ժամանակում շատ գործ է արել Պաղեստինում Պրովօսյալ դասանութեան համար: Նա բարեկարգել է Ռուս ուխտաւորներին դէպի Ս. Երկիրը կատարած ուխտագնացութիւնները, բացել է դպրոցներ, բժշկական կայաններ, աջակցել է Ս. Երկրի գիտական ուսումնասիրութեան գործին և Ռուս հասարակութեան մէջ սէր է զարթեցրել այդ խնդրի նկատմամբ: Աերջին տեղեկութիւններին համաձայն «Պաղեստինի ընկերութիւն» ունի այնտեղ 23 ժողովրդական դպրոց (աղայոց և աղջիկների), թէ գիւղերում և թէ քաղաքներում (Երուսաղէմ, Նազարէթ), ուր 1000-ից աւելի մանուկ է սովորում: Ունի հիւանդանոց (Երուսաղէմ) և չորս բժշկական կայան (Երուսաղէմ, Բէթղէհէմ, Նազարէթ և Բէա—Ջալի), Բացի դորանից Ընկերութիւնն ունի 42 դպրոց Ասորիքում, մօտ 6000 աշակերտներով: Իւրաքանչիւր տարի Ընկերութեան գործունէութիւնը ստացած եկամուտները շնորհիւ ընդլայնում է: Գործը 80 րուր. պարտով սկսելով, ընկերութեան այժմեան տարեկան եկամուտը հասնում է 350 հազար րուբլու, որով իւր ցանցը հետզհետէ տարածում է Պաղեստինում և Ասորիքում: Թէև այս եկամուտը դեռ շատ հեռու է բողոքական եկեղեցու ընդհանուր տարեկան նախահաշուից (40 միլիոն րուբ.), բայց այս փաստն արդէն ցոյց է տալիս, որ Ընկերութիւնը մեծ ապագայ ունի Պաղեստինում:

ԲՈՒՂԱՐՈՒ.

Չնայելով այն հանգամանքին, որ Բուլղարիան շատ բան է պարտական Պրովօսյալ եկեղեցուն, բայց և այնպէս Պրովօսյալ եկեղեցին և կրօնը Բուլղարիայում ունի իւր երգուեայ թշնամիները, Բուլղարական ազատամիտ դպրոցներից դուրս եկած ուսուցիչների մէջ կան մարդիկ, ասում է Перк. Вѣст., որոնք բացարձակ դուրս են գալիս Պրովօսյալ եկեղեցու դէմ: Ժողովների, համախմբումների, ուսուցչական խորհրդակցութիւնների ժամանակ նորա պահանջում են գալոցից բոլորովին հանել կրօնի դաստուութիւնը, Մի քանի ժողովների մէջ ձայնից բազմութեամբ այդպիսի վճիռներ են կազմել, որի գործադրութիւնն ևս պահանջում են, Պրովօսյալ եկեղեցու հակառակ այդպիսի վճիռներ կազմուել են Տիրնովի, Բուրգասի և այլ քաղաքների ժողովներում: Այդպիսի վճիռ է կազմել և հարաւային Բուլղարիայի փոքրիկ Դամբոյի քաղաքը, բայց Պրովօսյալ եկեղեցու և կրօնի հակառակորդները զօրեղ դիմադրութեան են հանդիպել տեղական ուսուցչական խորհրդի կողմից, Խորհուրդը վճռել է արձակել այն բոլոր ուսուցիչներին, որոնք բացասական ձայն են տուել կրօնի դաստուութեան համար:

Մեզ պէտք չեն կրօնին հակառակ ուսուցիչներ, ամենից աւելի ցանկալի է մեզ համար, որ ժողովրդական դպրոցները մեր զաւակներին բարի քրիստոնեաներ կրթեն, ասում է ժողովի վճիռը:

ԿԼԹՈՒԿ ԵՎԵՂԵՑԻ.

Աւելի մեծ միջոցներ և ոյժ ունի իւր ազդեցութիւնը Պաղեստինում տարածելու համար կաթոլիկ քարոզչութիւնը, Լատինացիք այստեղ ունին իրենց պատրիարքութիւնը, որ կառավարում է Mgr. Պիպի, և քարոզիչների մի ահապին բանակ, Պապական գաղափարները Պաղեստինում տարածելու համար այնտեղ են ուղարկուած մօտ 20 կարգի քարոզիչներ, Լատին քարոզիչներն աւելի մոլեռանդ են և աւելի քիչ խորութիւն գնող իրենց նպատակին հասնելու միջոցների մէջ, որտեղ ամենայն ինչ կատարում է ad maiorem Dei gloriam, իսկ ներքին կիանքը և գործունէութիւնը պողպատեայ կարգապահութեամբ և կռանուած, որով նորա հշու և հնազանդ (ad cadaver) գործիքներ են զառնում հռովմէական propagandae fidei փորձառու և եռանդուն անդամների ձեռքին: Վաթովիկ եկեղեցին ևս իւր ազդեցութիւնը տարածելու համար օգտուում է գործադրում է այն միջոցները, ինչ որ բողոքականութիւնը, այսինքն բանում են ամեն կարգի դպրոցներ, հիւանդանոցներ, անկեղանոցներ և ընդ որպէս զի գաղափար կազմենք լատին եկեղեցու Պաղեստինում ունեցած ոյժի և ազդեցութեան

մասին, բաւական է աչքի առաջ ունենալ, զէթ միայն Երուսաղէմի մէջ ունեցած լատինական հաստատութիւնները, Երուսաղէմում և նորա մօտ շրջակայքում ունեն. 1) տարրական ծխական դպրոց՝ տղաների համար, հիմնուած «քրիստոնէական զբոսայրոցների եղբայրութեան» ծախքով. 2) Ֆրանցիսկեանների տարրական դպրոց. 3) Աւստրիականների (յոյն — կաթոլիկ) ս. Աննայի հոգ. դպրանոց, հիմնուած աֆրիկական քարոզիչների «սպիտակ կամ Ալթերեան եղբայրների» կարգի միջոցներով, որ իւր սաներին պատրաստում է մօտել 4) Ս. Աննայի արեւելեան ճեմարանը, որտեղ ուսանողները յատկապէս պատրաստում են արեւելքում քարոզելու և գործելու համար. 5) Լատինական պատրիարքական հոգ. դպրանոց. 6) Ս. Գրոց գիտութեան (Ecole Biblique) գործնական դպրոց, հիմնուած Դոմինիկեանների ձեռքով, աւանդում են Աւսումն ս. Գրոց, Աստուածաշնչի տեղագրութիւն և աշխարհագրութիւն, հնագիտութիւն, երայրերէն, ասորերէն, արաբերէն, սեպագիր արձանագրութիւնների ընթերցանութիւն և աստուածաբանական ու փիլիսոփայական բարձրագոյն դասընթաց. ուսանողներն ամենայն տարի գիտական ուղևորութիւններ են կատարում Ս. Երկրի զանազան մասերը և դասախօսութիւններ կարգում ցանկացողներին համար: 7) Ս. Պետրոս Սիօնացու Արեւան արհեստագիտական դպրոց՝ գիտնական բարձր դասընթացով, որ յանձնուած է եօթ կսեռնի (կաթ. լեհ. քահ.) և քսան գիտնական վարպետի ու ուսուցիչների հսկողութեան: 8) Ս. Փրկչի որբանոց. պատկանում է ֆրանցիսկեաններին. աւանդում են զաւանաբանական աստուածաբանութիւն, փիլիսոփայութիւն, եկեղեց. պատմութիւն և ս. Գրոց հնագիտութիւն. աշակերտները վարժուում են քարոզներ խօսել ֆրանսերէն, արաբերէն և իտալերէն. ունեն և գործնական արհեստանոց, զանազան արհեստագիտութեամբ և նոյն իսկ տպարան: 9) Պատեր Հմիտի դպրոց. 10) Լազարիստների դպրոց՝ գերմանական գաղութի մէջ. 11) «Ս. Կարլոսի քոյրեր»-ի դպրոց և գեղատուն. 12) „Ecce homo“ (Ահա այդք) արհեստագիտական դպրոց. 13) Ֆրանցիսկեան քոյրերի աղջիկների ծաղկոց. 14) «Ս. Յովսէփի երեման քոյրեր»-ի աղջիկների դպրոց՝ և դասարանով. սովորեցնում են ընդհ. զարգացման առարկաներ, ֆրանսերէն, իտալերէն, արաբերէն և ձեռագործ. աշակերտուհիների թիւն է 300. 15) Նոյն քոյրերի հիմնած ա) ընկեցիկները տուն, բ) որբանոց և գ) ապաստանարան, ուր խեղճ, անոք և հիւանդ մանուկները պահպանուում կրթութեւնում և դասախարակում են. սովորում են արհեստներ և ձեռագործ. 16) «Սիօնի Աստուածամօր ընկերութեան» աղջիկների դպրոց, 6 տ. դասընթացով և մի քանի բաժանմունքներով՝ կաթոլիկ, հրէայ և մահմետական մանուկների համար. սովորում են ընդհ. զարգացման առարկաներ, ֆրանսերէն, ձեռագործ. 17) «Կաթոլիկ ողորմած քոյրերի ընկերակցութիւն» ունի իւր առանձին մի խումբ հաստատութիւններ. այն է ա) ընկեցիկ մանուկների ապաստանարան, բ) կոյրերի դպրոց. գ) ձերերի և անբժշկելի հիւանդների անկեղանոց. դ) ընդարձակ արհեստանոց երթեւեկ աշակերտուհիների համար. ե) ձրի բժշկական կայարան, զ) գեղատուն՝ սկզբնական բժշկական օգնութեամբ և ըն. 18) Ապրիլական տներ. — ա) ֆրանցիսկեան Կազա — Նովա, բոլոր կաթոլիկներին համար. բ) աւստրիական, միայն աւստրիացիներին համար. 19) գերման կաթոլիկների «Կարլ Բօրօ-էլյացու քոյրերի ընկերութեան» որբանոց և ապաստանարան, գ) ապաստանարան «Ֆրանսիայի հովանաւոր ս. Կոյսի» (Notre Dame de France). 20) Հիւանդանոցներ և գեղատներ. — ա) «Ս. Լուգոփիկոսի» հիւանդանոց, հիմնած կոմս Պիէլլայի միջոցներով, բ) «Ս. Յովսէփի երեման քոյրերի» հիւանդանոց. գ) «Կաթոլիկ ողորմած քոյրերի ընկերակցութեան» քաղաքային հիւանդանոց ամեն ազգութեան համար. դ) «Ս. Մարիամի» մանկական հիւանդանոց. ե) «Յիսուսի օգնութեան» բորոտների հիւանդանոց. զ) ֆրանցիսկեանների գլխաւոր գեղատուն, է) և այլ բազմաթիւ մեծ ու փոքր գեղատներ, հիւանդանոցներ, կոյրերի և խուլերի ապաստանարաններ բազմաթիւ զպրոցներ՝ ամեն կարգի և անունների, որոնցից ոմանք մասնաւոր անհատների և ոմանք ընկերութիւնների ձեռքով են շինուած. 21) վերջապէս Երուսաղէմի մօտ է գտնուում Դօն — Բելլօնի մի քանի դպրոցները, որոնք նպատակ ունեն ջերմեռանդ հիմնադրի միջոցներով կաթոլիկական գաղափարները տարածել տեղացիների մէջ:

Այսպիսով կաթոլիկները, Ս. Քաղաքը լցրել են քարոզչական հաստատութիւններով և կայաններով. Նոյնը նկատուում է և շրջակայ փոքր ի շատե նշանաւոր քաղաքների մէջ, Ընդհանրապէս կաթոլիկ և բողոքական քարոզիչների հիմնած հիւանդանոցների, անկեղանոցների, բժշկական կայանների, ապաստանարանների, դպրատների, սոցա բաժանմունքների, միջերանոցների, գործարանների և ջրաղացների ցանցը բռնել է ամբողջ Պաղեստինը. Քարոզչական բազմաթիւ գործունեայ և միջնաւոր աշխատաւորներ վարպետութեամբ տարածում են այդ ցանցը և նորա մէջ առնում Պաղեստինի խեղճ, անկիրթ և անօգնական ասորական ազգաբնակչութիւնը և ոչ միայն կրթութեւն են նորա զաւակներին, այլ և աւարտելուց յետոյ ևս տեղ, դրամական օժանդակութիւն և քաղաքական հովանաւորութիւն են տալիս: Այս կողմից աւելի գործունեայ է Հռոմէական եկեղեցին, որ պապի գլխաւորութիւնն ընդունելուց յետոյ, ամեն ինչ տալիս է իւր որդեգրեալներին, Այդպիսիներին

Այսպիսով կաթոլիկները, Ս. Քաղաքը լցրել են քարոզչական հաստատութիւններով և կայաններով. Նոյնը նկատուում է և շրջակայ փոքր ի շատե նշանաւոր քաղաքների մէջ, Ընդհանրապէս կաթոլիկ և բողոքական քարոզիչների հիմնած հիւանդանոցների, անկեղանոցների, բժշկական կայանների, ապաստանարանների, դպրատների, սոցա բաժանմունքների, միջերանոցների, գործարանների և ջրաղացների ցանցը բռնել է ամբողջ Պաղեստինը. Քարոզչական բազմաթիւ գործունեայ և միջնաւոր աշխատաւորներ վարպետութեամբ տարածում են այդ ցանցը և նորա մէջ առնում Պաղեստինի խեղճ, անկիրթ և անօգնական ասորական ազգաբնակչութիւնը և ոչ միայն կրթութեւն են նորա զաւակներին, այլ և աւարտելուց յետոյ ևս տեղ, դրամական օժանդակութիւն և քաղաքական հովանաւորութիւն են տալիս: Այս կողմից աւելի գործունեայ է Հռոմէական եկեղեցին, որ պապի գլխաւորութիւնն ընդունելուց յետոյ, ամեն ինչ տալիս է իւր որդեգրեալներին, Այդպիսիներին

կաթոլիկացնելով, լատին հոգևորականութիւնը ճանաչում է նոցա միայն ունիականեր, թողնելով պահպանել նախկին կրօնական հաւատալիքները, ծէսերը, ազգային լեզուն և նուիրապետական կարգը, ապագային վերապահելով նոցա ամբողջապէս իւր հետ ձուլելու գործը:

— Պօզնանի լեհացիների մէջ այժմ մեծ յղջեր են տիրում պրուսական մինիստր գ-ր Շտուգարի վերջերս հրատարակած շրջաբերականի առթիւ, որով ամբողջ Պօզնանի բոլոր միջին և ստորին կարգի դպրոցներում արգելւում է աւանդել կրօնը լեհերէն: և պահանջւում է գերմաներէն լեզուով դաս տալ լեհերին: СПб. Вѣд.-ի ասելով, լեհ ծնողները պատրաստ են իրենց զաւակներին «չհաղորդելու» յայտարարել, որպէս զի աղատուն կրօնի դասերի այդ եղանակ աւանդելու ծանրութիւնից, Գործի մէջ է խառնուել և Պօզնանի եպիսկոպոս՝ գ-ր Ստարկեսկին, որ հարցապնդում է արել կառավարութեան, թէ ի՞նչու նախարարը մինչ շրջաբերականի հրատարակելն իրեն ոչինչ չէր հաղորդել, ինչպէս տեղական հոգևորականութեան զխաւօրի, Լեհացի մանուկներն ևս հրաժարւում են գերմաներէն աղօթք կարդալուց կամ դաս պատասխանելուց: Գպրոցական վարչութիւնը այդ բանի մէջ մեծ «խռովութիւն» տեսնելով, որ առաջ է դալիս ազգայնական և անընտան ձգտող դադափարների սերմանելուց՝ իւր դպրոցների փոքրիկ աշակերտների տներում եռանդուն խուզարկութիւններ է կատարում:

Գերմանական ազգային մամուլը խիստ գովում է կառավարչութեան այդ ընտր, լեհական քաղաքականութիւնը, խրախուսելով «միացման» և գերմանացման ձգտումները, իսկ կաթոլիկ կուսակցութեան մամուլը հուր և կայծակ է թափում, սպառնալով հարցապնդում սկսել լանդտագի նիստերի բացուելուն պէս: Նացիոնալիստ Deutsche Zeit. թերթը պաշտպանում է հարցը մի լեհաստեաց յօդուածում ասելով, որ գերմանական սահմանադրական դաշնակցութեան յայտնի է միայն գերման ժողովուրդը, իսկ լեհ ազգը, լեզու գերման ժողովուրդի մէջ գոյութիւն ունենալ չէ կարող: Վենդրոնի բերան Germania թերթը իւր կողմից խորհուրդ է տալիս գ-ր Ստարկեսկուն մինչև վերջը տանել իւր սկսած և յարուցած խնդիրը, հակառակ դէպքում հրամայել կսենձներին լեհացի մանուկներին հաւաքել կոստներն (եկեղեցի) ու այնտեղ աւանդել կրօնի դասերը:

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵՎԵՂԵՑԻ.

Բողոքականութիւնը Պաղեստինում. — Բողոքականութիւնը իւր գործունէութիւնն սկսել է Պաղեստինում այս դարու 20-ական թուական-

ներից և ի դէմս գերմանական, ամերիկական և անգղիական քարոզիչների բաւական մեծ շաբ է ներկայացնում: Բողոքական քարոզիչների ամենամեծ զէնքն է ժողովրդական կրթութեան գործը, իւր բոլոր ճիւղերով՝ ստորին, միջին և բարձրագոյն կրթարաններով: Բարոզութեան զէնքերից մէկն է և տնտեսական ու բժշկական օղնութիւնը, քաղաքական հովանաւորութիւնը և կրօնական առաքելութիւնը: Բողոքական եկեղեցին և նորա ներկայացուցիչները այնքան մեծ ուշադրութիւն չեն դարձնում եկեղեցիներ բազմացնելու համար, նոքա միայն բաւականանում են անհրաժեշտ պահանջով, դորա փոխարէն Ս. Երկիրն այժմ ամբողջապէս ծածկուած է նոցա դպրոցների խիտ ցանցով, ունեն բազմաթիւ որբանոցներ, որոնց վերայ անչափ գումարներ են ծախսում: Այս միայն Պաղեստինում, այլ նոյն իսկ Յայնկոյս Յորդանանում չի գտնուիլ մի քաղաք կամ գիւղ, որտեղ բողոքական դպրոց չգտնուի: Եւրոպացիներն ամենաաղիկալ փիճակի մէջ են, ուսումնական—կրթական կողմից նախանձելի են և դորա հետ բազմաթիւ աշակերտներ ունեն, մանաւանդ Պրովանսլանդներից, Եւրոպայում և Պաղեստինում գտնուած մօտ 300 բազմազան բնակչութիւնների գործունէութեան միակ ասպարէզն է դպրոցը: Նոցա տարրական նախահաշիւը կազմում է 40 միլիոն րուբլ, մի պատկանելի գումար: Բողոքական քարոզչութեան կենդրոնն է Երուսաղէմը, ուր գտնուում են հետեւեալ հաստատութիւնները. 1) Անգղիական եպիսկոպոսական, այսպէս կոչուած, Գաբրիէլայի հոգ. դպրանոցը, ուր սովորում են և Պրովանսլանդներ, 2) Յատկապէս հրէայ մանուկների համար բացած 4 դպրոց, որոնցից 2 գիշերօթիկ, 3) Աթ դպրոց Պրովանսլանդների համար, 4) Պաննց կրթական «Տալիթա—Աումի» հաստատութիւնը (դպրոց և որբանոց), որ գոյութիւն ունի 1853 թուից Յոպպէի ճանապարհի վերայ, իսկ այժմ 120 աշակերտուհի ունի տեղացիներից, այդ դպրոցը մինչև այժմ հազարից աւելի սանուհի է տուել, որ ամենքն էլ գործում են այժմ նոր բացած դպրոցներում իրր վարժուհի, անտեսուհի, դաստիարակչուհի և կամ սարկաւագուհի ևլն. 5) Պաստոր Էնկլէրի 1861 թ. բացած ասորի մանուկների որբանոց—դպրոցը տալիս է իւր սաներին, ինչպէս և Տալիթա—Աումին, և ուսում և արհեստներ, — հիւանդութիւն, ճախարակագործութիւն, կազմարարութիւն, փականագործութիւն ևլն. դպրոցն ունի 150 որբ. 6) հոգևոր դպրանոց, որ նպատակ ունի ասորական որբանոցի աւելի ընդունակ աշակերտներից պատրաստել թարգմաններ, ուսուցիչներ, քարոզչական գործակալներ ևլն. 7) Բլիսս եպիսկոպոսի որբանոցը և 8) Տաճարականների հոգ. դպրանոցը՝ գիմնազիայի դասընթացով: Բաւի սոցանից բողոքականներն ունեն անկէլանոց-

ներ, հիւանդանոցներ, դեղատներ, գոցանից ամենից աւելի նշանաւոր է—1895 թ. Կէյզերվերտի քոյրերի բացած հիւանդանոցը՝ 60 մահճակալով, որտեղ գործադրուում է բժշկական գիտութեան վերջին խօսքը, նշանաւոր է և պրուսական Ասպրնջականների անկելանոցը, Բողոքական քարոզիչների ընդհանուր թիւը հասնում է Պաղեստինում 400-ի, նոցա մէջ կան և աշխարհական անձինք՝ բժիշկներ, դիտակներ, ճարտարապետներ ևլն: Հեթանոսներին դարձի բերելու գլխաւոր միջոցներից մէկն է բժշկական օգնութիւնը: Պաղեստինի խեղճ և քաղցած աղգարնակութիւնը ենթակայ է բազմաթիւ հիւանդութիւնների, որոնց զոհերը միւսոյն ժամանակ և զոհ են դառնում բողոքական քարոզիչների համար (այդ զոհերի մէջ են լինում և բազմաթիւ Պրօֆուլաներ), որոնք շատ անգամ միջոցների գործադրութեան մէջ խտրութիւն դնելուց խուսափում են: Յայտնի է և ասորական որբանոցի հիմնադիր Էնէլլերի հաստատած Ռամէի դիւղատնտեսական ագարակը, այդտեղ են ուղարկւում իւր դպրոցն աւարտածներին, որպէսզի կենսաքի մէջ մտնելուց առաջ տնտեսական—գործնական պայմանների հետ ծանօթանան: Ի վերջոյ շատ մեծ նշանակութիւն ունեն բողոքականութեան տարածման համար և գերմանական գաղութները, որոնք տեղացիների ուշադրութիւնն են գրաւում իրենց օրինակելի բարեշինութեամբ: Կարգ ու սարքով և բարեկեցութեամբ:

ԱՆԳՂՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻ:

Բացի յայտնի «Փրկութեան բանակից» Անգղիայում գոյութիւն ունի և «Եկեղեցական Բանակ» (Church Army), որի հիմնադիրն է Լօնդոնի եկեղեցիներից մէկի երէց Կարլէյլը: Այս նոր «բանակը» կազմուած է իւր հակալիւ «Փրկութեան բանակին» որ ճանաչուած է անգլիական եկեղեցու կողմից ոչ միայն հակաեկեղեցական, այլ նոյն իսկ հակաքրիստոնէական մի հաստատութիւն: Եկեղեց. բանակի հիմնադիրը՝ Կարլէյլը այդ հաստատութեան սկիզբը դրեց նորանով, որ պահոց օրերը իւրաքանչիւր երեկոյ ժամը 9—10 մօտերը կարճ պաշտամունք էր կատարում փոքր զոյում: Այդպիսի պաշտամանց տեղ ընտրում էր ամենաբանուկ փողոցները [ստորերկրեայ երկաթուղու կայարանի մօտերը], ուր միշտ մեծ ընդմութիւն է լինում: Հէնց որ վերջանում էր կերակնօրեայ երեկոյեան ժամերգութիւնը, Կարլէյլը իւր օգնականներին հետ մի գրօշակակիր առջևից օրհներգներ երգելով դուրս էր գալիս Հայ—Կենսինտօնի ամենաբանուկ թաղերի փողոցները: Արտատուր գնացքը իսկոյն ժողովրդի ուշադրութիւնն էր գրաւում, հասարակ դասըն իսկոյն խմբւում էր և Կարլէյլը հրաւիրում

էր նորանց մի մեծ դահլիճ: Այստեղ օրհներգ էին երգում, ճառեր արտասանում: Ամենից վերջը, սովորաբար ինքը Կարլէյլն էր խօսում, հրաւիրելով հանդիսականներին գլխել առ Քրիստոս և ծունկ խոնարհել ապաշխարութեան աթոռակի առաջ: Առաջին օրերի յաջողութիւնը դրդեց Կարլէյլին կազմել հասարակ դասից քարոզչական համայնք, որ անգլիական եկեղեցու հոգւով քարոզներ պիտի խօսէր, եկեղեցու ներկայացուցիչներին անմիջական հսկողութեամբ:

Համայնքի կազմակերպութեան արտաքինը նա փոխ առաւ «Փրկութեան բանակից», Իւր քարոզիչներին նա բաժանեց «լինուորների» և «սպանների»: Ամենքն ունէին միաձե համադրեցող «սպանների» մետաղէ սկզբնատառեր, բացի դոցանից կային և «նորակոյններ» կամ թեկնածուներ, առանձին համադրեցող:

Սկզբում Կարլէյլը իւր փոքրաթիւ բանակը դրեց արդէն գոյութիւն ունեցող «եկեղեցական—ծխական քարոզչական ընկերութեան» (Church parochial Mission—Society) տրամադրութեան տակ: «Եկեղեց. բանակի» առաջին գործունէութիւնն սկսուեցաւ մի «արշաւանքով» դէպի Վեստմինստեր շրջակայքը, որ այն ժամանակ համարում էր Լօնդոնի ամենամռայլ անկիւններից մէկը:

Կարլէյլը հետ համարեալ, միաժամանակ անգլիական եկեղեցու մի քանի այլ անդամներ հիմնեցին նմանօրինակ մի այլ բանակ՝ «Եկեղեցական քարոզչական մարմին» (Church mission Corps) անունով: Այնուհետեւ գործի շահեկանութեան տեսակէտից այդ բանակը միացաւ «Եկեղ. բանակի» հետ, որն արդէն 1884 թ. ճանաչուեցաւ պաշտօնապէս իսկ Կարլէյլը դարձաւ նորա ղեկավարը: Այդ ժամանակ հէնց հրատարակուեցաւ և բանակի «կանոնադրութիւնը» (Modes of Working): Այդ «կանոնադրութեամբ» եկեղ. բանակը մի հաստատութիւն է, որ նպատակ ունի հասարակ դասի և անգլիական եկեղեցու իւրաքանչիւր հետ ունենալիք հաղորդակցութիւնը դիւրացնել: Այդ նպատակին նա կամենում էր հասնել, տալով եկեղեցիների աւագներին «օգնական—քարոզիչներ» աշխարհականներին: Ընկերութեան «բանակ» անունըն իսկ ընտրուած էր այն դիտաւորութեամբ, որ ընդդէմ ընկերութեան իւրաքանչիւր անդամի ամենադիւրաւ պարտաւորութիւնը՝ հնազանդութիւն: Եկեղեցական բանակի սպանները, թէև աշխարհական, բայց համարւում էին հոգեւորականների օգնականներ և ենթարկւում էին եկեղեցիների աւագների հսկողութեան:

Կանոնադրութեամբ իւրաքանչիւր սպայից և նորա ամուսնուց պահանջւում էր ամենեւին ողելից խմիչքներ դործ չածել, ծխախոտ չխել:

վէպեր չկարգաւ և հեռու կենալ շապուածիւնից և «այսպէս կոչուած անվնաս» բայց կասկածելի իրերեց։ Բանակի սովորական «գինուորեց» պահանջուած էր առնուազն հեռու կենալ ոգելից ըմպելիքներէց։ Ով չուէր այդ սովորութիւնն, այդպիսին բանակ ընդունուելուց առաջ՝ պարտաւոր էր ստորագրութիւն տալ այդ պարտաւորութիւններն ընդունելու մասին, ժողովրդի վրայ ազդեցութիւն ունենալու միջոցներէց մէկն էր համարուած կազմել կրօնական—հանդէսներ։ Որպէսզէն այդպիսի ժողովները ձանձրալի չլինէին, ուսանողները վերայ պարտք էր դրուած հոգալ այդ մասին. կանոնադրութիւնը տրամադրուած էր որ «աւելի քան է 30 թոյլ հոգատոր, որոնք կարճ պիտի խօսէին» քան մի քանադասը, որ շատ երկար է «խօսում»։ Քացի սոցանից կանոնադրութիւնը հաստատեց և այն ամենը ինչ որ առաջուց մտցրել էր «Կարէյլը»՝ փոխ առնելով մեթօդիստներէց և Փրկութեան բանակից, այն է դրօշակ, երաժշտական թափօրներ, ժողովներ բաց երկնքի տակ և անպաշտարութեան ամբողջական Փրկութեան բանակի պէս «Եկեղ. բանակ» ևս իւր հրատարակած լրագիրն անուանեց «The battle axe» («Պատերազմական տապալ») որի մէջ հաղորդուած էր ընկերութեան գործնէութեան մասին։

Հուտով Օքսֆորտում մի առանձին դպրոց հիմնուեցաւ Եկեղեց. բանակի համար քարոզիչներ պատրաստելու նպատակով, Օքսֆորտի եպիսկոպոսը համաձայնեցաւ մինչև իսկ դպրոցի վերահսկողութիւնն իւր վերայ առնել, քննել նոր ընդունուողներին և իրաւունք տալ քարոզելու։ Հնորհիւ այդ հանգամանքի «Բանակը» հասարակութեան աչքում եկեղեցական հաստատութեան կերպարանք ստացաւ, Հուտով սովորութիւն դարձաւ նոր քարոզիչներին այս կամ այն գիւղը հրաւիրել քարոզելու համար, Համալսելով հրաւիրուած տեղը՝ քարոզիչը սովորաբար մնում էր այդտեղ 7 շաբաթ, հանգիստաւոր թափօրներ բաց երկնքի տակ, կամ որ և է շինութեան մէջ, ժողովներ ուղարկելով։ Պիւրակի օրերը հանդէսներին մասնակցում էր և տեղական հոգևորականութիւնը։ Եթէ քարոզչական գործը յաջող էր գնում և բանակի մէջ մտնելու ցանկութիւն յայտնողներ էին գտնուում, այստեղ հիմնուում էր մշտական «մարմին» (corps), որին առաջնորդ էր կարգուած մի «կապիտան» և իւր օգնական նորան մի «լէյտենանտ»։ Նոր սպաների ծախքերը հոգում էր բանակը, բայց նորա իրաւունք ունէին և որոշ հասոյթներ ստանալ, որ հաւաքուած էր ժողովների ժամանակ, իսկ մնացածը մտնում էր բանակի գանձարանը։

Բանակի նոր անդամների ընդունելութիւնը

կամ նորակոչների ղեկուոր դարձնելը կատարուած էր որոշ հանգիստաւորութեամբ։ «Ընդհ. ժողովի» ժամանակ կարգաւորուած էին և Գրքից համապատասխան տեղեր, խօսուած էին ճառեր, նոր անդամները երգում էին և հանգիստականները խմբովին երգում էին սովորաբար «Էջ» Հոգիդ Սուրբ» օրհներգը։

1884 թ. վերջին Անգլիայի դանազան մասերում տրգէն Եկեղ. բանակն ունէր մինչև 50 «մարմին»։ Կարէյլը Բուաի պէս չէր կրում «Գեներալ» տիտղոսը, բայց նոյն իրաւունքներով կառավարում էր ամբողջ բանակը Լօնդոնում գրտնուած իւր «Գլխաւոր Վարչութեան» օգնութեամբ։ Երբեմն նա այցելում էր այս կամ այն մարմինը, այդպիսի այցելութիւնները միշտ կատարուած էին ամենամեծ հանգիստաւորութեամբ, Մարմինը իւր ամբողջ կազմութեամբ, երաժշտական խմբով և դրօշով, սովորաբար, Կարէյլին ուղարկում էր կայարանում, Տեղ հասնելով «Գեներալն» անմիջապէս հագնում էր իւր սրբազան զգեստները, «Բանակի» հրամանատարի գլխարկը դնում էր, կապում էր կարմիր, ծոպաւոր ժապակէն և ժողովուած հետաքրքրողների ահագին բաղմութեան ուղեկցութեամբ գնում էր քարոզչական ժողովը։

Բանակի մեծամեծ յաջողութիւնները և աւագ տարածումը պատճառ եղաւ կազմելու «Համայնական առաքելութիւններ» (Church parochial mission), Ամեն կողմից տեղացող ահագին քանակութեամբ դրամի շնորհիւ բանակը ձեռք բերեց Լօնդոնում սեփական շէնք, որի մատուռը 1886 թ.-ին Լօնդոնի եպիսկոպոսը հանգիստաւոր կերպով օծեց։

Սկզբում այս նոր բանակի գլխաւոր տարբերութիւնից մէկը «Փրկութեան բանակից» այն էր, որ կանայք իրաւունք չունէին նորա մէջ մտնելու։ Բայց 1886 թ. սկսած կանանց համար սահմանուեցաւ նոր պաշտօն՝ սպաների օգնականներ անուանով, որոնք և կոչուած էին «Առաքելութեան քոյրեր» (Mission nuses)։ «Քոյրերն» ամենից առաջ պարտաւոր էին Լօնդոնի հիւանդանոցում մի քանի տեսական և գործնական տեղեկութիւններ ձեռք բերել, Բայց նոցա գլխաւոր վարժութիւնը, որ մի քանի ամիս էր տեւում, այն էր, որ նրանց տեղեկութիւններ էր հաղորդուած Ս. Գրքից, վարժուած էին երգել և խօսել ժողովների ժամանակ, այցելում էին հիւանդներին, ընկած կանանց և ինչ նշանակող գործնէութիւն սկսելուց առաջ «քոյրերը» ինչպէս և «սպաները» որոշ քննութիւն էին տալիս և միայն յաջող քննութիւնից յետոյ պաշտօն էին ստանում։ Այդպիսի դէպքում նոքա պիտի ծառայէին այն քահանայի ձեռքի տակ, որ նոցա հրաւիրել էր. նո-

բանից էին ստանում և ապրուստի միջոցները «Բոյերեր»-ի գործունեութիւնը շատ բազմապիսի է։ Նոքա ժողովներ են կազմում՝ ուր կարգում են Ս. Գիւրքը, այցելում են հիւանդներին և թշուառներին, բանակի հրատարակութիւններն ու լրագիրներն են վաճառում և ինչպէ՛ 1894 թ. բանակում կար այդ «Բոյերերից» 160 հոգի։

Վերջին տարիներս Եկեղ. բանակը կանոնաւոր քարոզութիւն է սկսել ամբողջ Անդղիայում։ Այս նպատակին նոքա հասնում են բաւական տարօրինակ եղանակով։ Բանակն ունի մի առանձին շարժական եկեղեցի, եթէ՛ կարելի է ասել՝ սայլակ—եկեղեցի, որով և նոր քարոզիչները շրջում են։ Դա մի մեծ սայլ է, արտաքին պատերը ծածկած բազմաթիւ ասացուածքներով՝ քաղած Ս. Գրքից, սայլի առաջամասում մի փոքրիկ տախտակամած կայ, որ ծառայում է քարոզչին իբր բէմ, իսկ սայլի ներսը ընակարան է։ Այդ սայլակները կոչւում են „Vans“, որին ուղեկցում է սովորաբար մի «կապիտան» և մի «լէյտնանտ», „Vans“-երը կարող է դնալ իւրաքանչիւր համայնք, միայն վերջինս ցանկութեամբ, առաջուց արդէն յայտնի է լինում թէ՛ սայլակ—եկեղեցին երբ պիտի գայ, որին և սպասում են մեծ հետաքրքրութեամբ։ Տեղ հասնելով իսկոյն «կապիտանը» սկսում է իւր առաքելութեան գործը։ Գործունեութեան առաջին քայլն այն է, որ կապիտանը վաճառում է կամ ցրում է ժողովրդի մէջ բանակի հրատարակած Ս. Գիւրքը, Աւետարան, աղօթագրքեր, բանակի լրագիրը, այնուհետեւ զրուցատրում են ժողովրդի հետ կրօնական դանազան հարցերի մասին և հրաւիրում են ամենքին աղօթքի, որ կատարուում է կամ քարոզչական ընկերութեան օրհնում կամ գուրգուր Կապիտանը հրաւիրում է ամենքին գալ իւր մօտ և ինչ կրօնական խնդրի մասին որ կամենան՝ խօսեն առանձնակի։ Քիչ չէ պատահում, որ կէս գիշերին մէկը բաղնում է սայլակ—եկեղեցու պատը և իսկոյն դուռն ամենայն պատրաստակեանութեամբ բացւում է։ Եկեղեցի—սայլակը կարող է մնալ համայնքում 2—3 շաբաթ, եթէ համայնքը կամենում է կամ եթէ «գլխաւոր վարչութեան» ուշադրութիւնն է գրաւել իւր գործնեութեամբ, որի մասին ամեն օր մանրամասն տեղեկութիւն է արւում գլխաւոր վարչութեան։

Հուսով «Vans»-երը ընդհ. ժողովրդակաւնութիւն ձեռք բերեցին Անդղիայում։ Բազմաթիւ համայնքներ շինել էին տալիս իրենց հաշուով սեփական Van։ Իւրաքանչիւր նոր „Van“ օժտւում է ինչպէս եկեղեցի. այն շրջաններում, ուր համայնքն ունի իւր Van-ը, նշանակւում են և առանձին քահանաներ։ 97 թ. բանակն ունէր 34 Van, իսկ 98 թ. աշնանը նոքա թիւը

հասնում էր 55-ի, 165 քարոզիչներով, Պէտք է ասել, որ Vans-ի և նորանց պաշտօնեաների ծախքը շատ աննշան է։

Վերջին ժամանակներս Եկեղ. բանակը քարոզչական նպատակով շատ մեծ չափով օգտւում է մոզական լապտերից, որ գործ է դրւում ոչ միայն սովորական ժողովների և զրուցատրութիւնների համար, այլ նոյն իսկ եկեղեցական պաշտամունքի ժամանակ։ Մոզական լապտերով ոչ միայն ցոյց է արւում աստուածաշնչի և եկեղեցական—պատմական դէպքեր, քաղաքներ և ընդհանրապէս ս. Երկրի տեսարաններ, այլ և զանազան այլաբանութիւններ՝ մեղքի կործանիչ ոյժը, արդարների երանաւէտ կեանքը և ինչ. Օր. պատառի վերայ երևում է Նոայի Մրդ. Ծ.Գ. 4-ը։ Յետոյ պատկերանում է Քրիստոս՝ փշեայ պոսակով, բայց այնպէս որ պոսակերի յետեւից երևում է Ս. Գրքի բառերը. «Նա զմեզս մեր բառնայ և վստն մեր շարչարի և մեր համարեցաք դնա ի ցաւս և ի հարուածս և ի չարչարանս իբրեւ յատուծոյ»։ Հատկանալի է, որ այս ամենի հետեանքն է լինում մի տեսակ միստիքական վերացումն, որից ազատ չեն մնում նոյն իսկ շատ կրթուած մարդիկ։

Մոզական լապտերի պատկերների վերայ բանակը շատ մեծ ուշադրութիւն է դարձնում։ Նա ունի իւր առանձին պահեստը, ուր վաճառւում են լապտերներ և յատուկ պատրաստած նկարներ։ Գլխաւոր վարչութեան ընակարանում յատկացրած է մի առանձին բաժին այն նկարիչների և գեղարուեստագէտների համար, որոնք իրենց ժամանակն ու ճարտարութիւնը կամենում են մի առ ժամանակ նուիրել բանակի շահերին. այդտեղ նոքա օրն ի բուն աշխատում են, ջանալով կատարելագործել այդ միջոցը։ Ամեն տարի «Վարչութիւնը» վաճառ է հանում մինչև 35 հազար նկար, Կան քահանաներ, որոնք բացարձակապէս անհնար են համարում առանց մոզական նկարների որևէ աստուածապաշտամունք կատարել։

Եկեղեցական բանակի գործունեութեան հետ ի մօտոյ ծանօթանալու համար, մարդ պէտք է ներկայ լինի Լօնդոնի Ս. Մարիամ եկեղեցու կիրառիւթեայ հանդէսներին։ Այդտեղ եկեղեցու աւագն ինքը Կարլէյլն է։ Նորա համայնքը Լօնդոնի մէջ ամենափոքրն է. ընդամենը 70 հոգի են։ Կիրակէ օրերը առ. 9 ժամի մօտերը Կարլէյլը թմբկահարութեամբ աղօթքի է հրաւիրում իւր օգնականներին, ժամը 9-ին սկսւում է պատարագը։ Պատարագի ժամանակ կարճ քարոզ է խօսում, որ 5 ր. աւելի չէ տևում, ապա աղօթք՝ բանակի բոլոր անդամների, հիւանդների, բացականների, աշխատաւորների և ինչ. համար

Պատարագը վերջանում է ներկայ անդամների փոխադարձ տղջոյններով: Ապա սկսւում է մի շարք կրօնական զրուցադրութիւններ և ժողովներ: որ սովորաբար 14-ից պակաս չէ լինում: Երեկ, ժամը 6-ին Կարլէյլի բոլոր օգնականները նորից եկեղեցի են ժողովուում: Կարճ ազօթքից յետոյ ժողովուած անդամները դուրս են գալիս եկեղեցուց և թմբկահարութեամբ, շփոփոյններ փչելով, ծածանող զրօշակներով առաջ են գնում փողոցի երկայնութեամբ: Թափօրի առաջից գնում է ինքը Կարլէյլը՝ ամբողջապէս բանակի յատուկ զգեստաւորութեամբ և ձեռքին մի մեծ փող: ապա երգիչները սպիտակ զգեստներով, յետոյ բանակի «գլխորդներ»-ը և քոյրերը: Արովհետեւ Ս. Մարիամի եկեղեցու փողոցների նեղ լինելու պատճառով միտինգներ կազմելն արգելուած է այդտեղ: ուստի Կարլէյլը իւր բոլոր ուղեկիցներով գլխում է Վիլհելմ արքայի արձանի հրապարակը, Թափօրով հետաքրքրուողներին ևս հրաւիրում են եկեղեցի, որտեղ Կարլէյլը անդադար իւր ձեռքի փողը փչելով բարձրանում է ամբիոն: Ապա սկսւում է քարոզ, որ սովորաբար վերջանում է ունկնդիրներին ապաշխարութեան հրաւիրելով:

Եկեղեցական բանակն տարէց տարի աճում է: 1895 թ. նորա «գլխաւոր վարչութեան» բնակարանը մի համեստ շէնք էր: Այժմ բանակը ձեռք է բերել նորա շուրջը գտնուած բոլոր տները և «վարչութեան» այժմեան բնակարանը պալատի է նմանում: Դեռ ևս ութ տարի առաջ բանակի լրագիրը ցրում էր 46 հազար օրինակ: Անդամների թիւն ևս հետզհետէ քաղմանում է: 1897 թ. բանակի մէջ է ընդունւած 80 կրթուած «օգնական» և «սատարուհի», «համայնական առաքելութեան» քարոզիչներ թիւն էր 316, որոնք կատարել են 775 ուղևորութիւն, բանտերում և աշխատանքի տներում գործում էին 65 անդամ: այս բոլորն վերայ պիտի աւելցնել և «առաքելական քոյրեր»-ը՝ թուով 154 և 75 հոգի «գլխաւոր վարչութեան անդամներ»: որ միայն պատռուած տիտղոս է:

Եկեղ. բանակի գործունէութիւնը վաղուց է, որ միայն Մեծ—Բրիտանիայում և Իռլանդիայով չի սահմանափակուում: Եւրոպայում, բանակը գործում է և Բելգիայում ու Ֆարօէյլում: Եւրոպայից դուրս բանակի գործունէութիւնը հասել է Հնդկաստան և նոյն խոյ Աւստրալիա: Հատեն են եկել այն համոզման, որ Եկեղ. բանակում հետզհետէ տիրում է մեթոդիստական զգացումներ և մի ժամանակի երբ ներկայ ղեկավարների տեղը ըստեն առաւել քիչ եկեղեցական հոգւով տողորուած մարդիկ,—բանակը կարող է մի տեսակ նոր հերձուածի կերպարանք ստանալ: Բայց բանակի բարեկամներն այլ տեսակ են մտա-

ծում: Անգղիացի պատմաբան յայտնի Մակուէյը Ռանդէի «Պապերի պատմութեան» առթիւ գրուածքի մէջ դատարկեցում է անգլիական եկեղեցին, որ նա կաթոլիկ եկեղեցու նման երբէք չէ կարողացել օգտուել և ղեկավարել ժողովրդի մէջ ժամանակ առ ժամանակ ըսնկող և երևացող ոգևորութիւնը: Եկեղեցական բանակի բարեկամների համոզմամբ, բանակն իսկապէս այժմ իւր գործունէութեամբ ջնջում է Մակուէյի կողմից անգլիական եկեղ. վերայ գրուած այդ դատարկեանքը: Անգղիական եկեղեցին, ասում են նորա, այժմ Բանակի քարոզիչների շնորհիւ, յիւրաւի դարձել է իւր ժողովրդի զգացումների կատարեալ ղեկավար:

ՀԻՔԵԼԿԵՆՈՒԹԻՒՆ.

Եւրոպական լրագիրներն ասելով զանազան քաղաքների ռաբբիները վերջին ժամանակներս անդադար զբաղուած են այսպէս կոչուած «պայմանական» ապահարդաններ ընձեռելով այն հրէականներին, որոնց ամուսինները գտնուում են զինուորական ծառայութեան մէջ կամ ստիպուած են երթալ Հեռաւոր Արևելք: Պայմանական ապահարդանները պաշտօնականի ոյժ են ստանում: Եթէ կինն ապացուցանէ, որ իւր ամուսինն անհետ կորել է: Արովհետեւ հրէական օրէնքով ապահարդանի ժամանակ մեծ գեր է խաղում մարդու համաձայնութիւնը, ուստի հրէականները վաղօրօք աշխատում են այդպիսի համաձայնութիւն ստանալ իրենց ամուսիններից: որ եթէ վերջիններս որևէ առթով այլ ևս իրենց մասին տեղեկութիւն չտան՝ իրենք ազատ լինեն նորից ամուսնանալու:

ՄԱԼՄԵՏԱԿԱՆ ԱՇԽԱՏ.

Վեջին ժամանակներս եւրոպական մամուլը շատ էր զբաղուած այն հարցով, թէ քրիստոնէական քաղաքակրթութիւնը կարող է զոհ գնալ յանկարծ մահմետական մոլեռանդութեան, որ կարող էր յառաջ գալ նոր համալսամականութեան գաղափարների ազդեցութեամբ ծագած պատերազմի շնորհիւ: „Nineteenth Century“ ի զուր է համարում այդպիսի վտանգները: Բացատրելով թէ մահմետական աշխարհի մէջ վերջերս սկսուած կրօնական նոր հոսանքները, զիանականների երեւակայութիւն է:

Միլիոնաւոր եւրոպացիներն համար Մահմաժետ Սենուսիի անունը մի դատարկ հնչիւն է, դուրս շատ շատերն իսկ առաջին անգամն են լսում, բայց Աֆրիկայի և Արաբիայի միլիարդ մահմետականների համար այդ անունն հետ կա-

պուլած է մասնատականութեան վերածնութեան յոյսերը: Սենուսիի զօրեղ աղանդը իւրաքանչիւր տարի աւելի և աւելի մեծ ազդեցութիւն է ձեռք բերում Աֆրիկայում: Այդ աղանդի հիմնադիրը, որի որդին այժմ մասնատական Աֆրիկայի կրօնական հոսանքի պարագլուխն է, իւր կենտրոնատեղի է ընտրել Լիբիայի անապատի զեղեցիկ օազիսներէն մէկը՝ Ջերաբուրը: Այդտեղ անցրեց նա մի քանի տարի ուսուցանելով իւր ապագայ առաքեալներին և հեղհեռէ իւր ոյժը ամրապնդելով: Նորա մահից յետոյ Ջերաբուրը դարձաւ այնպիսի նոր ուխտատեղի, ինչպէս և Մեկկան և իւրաքանչիւր տարի ահագին քանակութեամբ ուխտաւորներ են գալիս այդտեղ մասնատական աշխարհի ամեն ծայրերէն՝ Աֆրիկայից, Հնդկաստանից, Արաբիայից, Տաճկաստանից ևլն:

Սենուսիի վարդապետութիւնը յիշաւի կարող է գրաւել ջերմեանդ մասնատականներին, որոնց համար մեծ ցաւ է կրօնի անկումը: Սենուսի խիստ պախարակում էր բարբերի անկումը և քարոզում էր վերադառնալ նախնական պարզութեան և մարբութեան: Բազմաթիւ անկողմնակալ դիտողներ հաստատում են, որ յիշաւի այն տեղերում, ուր գտնում են Սենուսիի բազմաթիւ հետեւողներ, չարիքը նուազում է և երկրի բարքերը աղնուանում են և լաւանում: Սենուսիի որդին, որ հրատարակեցաւ իւր «Իսկական Մահալ», հօր մահից յետոյ շարունակում է նորա գործը: Նա մեծ համարում և յարգ ունի մասնատականների մէջ, որոնք նորա վերայ նույնում են որպէս ճշմարիտ մարդարէի վերայ: Եւրոպական ճանապարհորդներից, բացի գերմանացի Նախտիգալից, ուրիշ ոչ ոք չէ տեսել նորան: Այդ ճանապարհորդի տեսելով Սենուսիին իւր վերայ շատ մեծ տպաւորութիւն է թողել և նորան, անպայման, շատ աւելի բարձր պիտի դասել Սուգանի տգէտ Մահալից: Վերջինս մի ժամանակ առաջարկեց Սենուսիին միանալ իւր հետ և ջնջել քրիստոնեաներին, բայց Սենուսիին չհամաձայնեցաւ:

Եւրոպացի ճանապարհորդներից շատերն են փորձել Ջերաբուր մանել, բայց ոչ ոքի չի յաջողել: Վերջին փորձ անողն էր Սելվո Աւայտ 1898 թ. բայց ստիպուած էր կախարդական քաղաքից 120 մղոն հեռավորութեան վերայ կանգ առնել, և ոչ իւր բացատրութիւնները, ոչ համոզիկներ ճառերը, ոչ կաշառքը չկարողացան Ջերաբուրի դռները բանալ նորա առաջ և նա ստիպուած էր վերադառնալ, համոզուելով որ իւր յամառութիւնը կարող է մահուամբ վերջանալ:

Ոչ մի կասկած չկայ, որ Սենուսիի գործակալները ցրուած են Միջերկրականի բոլոր նաւահանգիստներում և դուցէ նոյն իսկ եւրոպական

մայրաքաղաքներում: Թէև նորա քրիստոնեաների երգուեալ թշնամիներն են, բայց նոցա յարաբերութեան մէջ այդ ամեննին չէ նկատուում: Նոքա շատ հիւրընկալ են և հաւատարմութեան ոգին խիստ զարգացած է նոցա մէջ: Բացի աղանդի գլխաւորից նոցա մէջ չկայ մի անձն, որ աւելի կամ պակաս պաշտօնական դիրք ունենայ, մահմետական եղբայրութեան բոլոր անդամները հաւատար են միմեանց և իւրաքանչիւրը պարտաւոր է օգնել միմեաներին: Ուշադրութեան արժանի է և այն, որ այս մահմետական աղանդը, որ քարոզում է կատարեալ ողջախոհութիւն և սեռերի յարաբերութեանց կատարեալ մաքրութիւն, կանանց ևս ընդունում է իւր գործակալներ և ամեննին չէ քաշում օգտուել և նոցա ցոյց տուած օգնութիւնից, մանաւանդ որ նոքա տղամարդկանցից աւելի եռանդուն և յաջող են քարոզական գործի մէջ:

Այժմ Սաատի Սենուսիին մօտ 55 տարեկան է: Նորա հետեւողներից ոչ ոք մինչև այժմ չէ տեսել նորա երեսը: Նա միշտ ծածկում է իւր գէմը, երբ ժողովրդի առաջ է դուրս գալիս: Ջերաբուրի մեծ վանքում իւրաքանչիւր տարի սովորում են 1500—2000 պատանի, որոնք յետոյ ցրւում են ամեն տեղ քարոզելու: Սենուսիի վարդապետութիւնը: Այդ գեռ ևս բոլորը չէ, Սենուսիին ունի զինագործարան և բացի դստանից մեծ քանակութեամբ գէնք է ստանում Աֆրիկայի ամեն ծայրերից: Գժուար է, անշուշտ, ճշդիւ որոշել նորա հետեւողների թիւը, բայց անկասկած է, որ ամբողջ Աֆրիկան ծածկուած է նորա հետեւողների խիստ ցանցով և սե—ցամաքի մէջ Սենուսիի քարոզութիւնը մեծամեծ օգուտներ է բերում, որովհետև նա մեռցնում է կուսապաշտութիւնը: Ամեն տեղ, ուր մահմետականութիւնն երևում է, կուսապաշտութիւնն ընկճւում է, այնպէս որ մահմետականների գործնութիւնն այդ տեսակէտից շատ աւելի արգասալից է, քան քրիստոնեաներինը: Սենուսիին մեծ հակառակորդ է և գերութեան. մինչև իսկ նա արձակեց այն բազմաթիւ գերիներին, որ գնել էր գերեվաճառներից: Այդ գերիները Ջերաբուրում մահմետական դարձնելուց յետոյ, յետ ուղարկեց Վադայ և, ի հարկ է, նոքա ամենաեռանդուն գործակիցներ դարձան Սենուսիի վարդապետատութեան տարածման համար: Սենուսիին այդ ճանապարհով ամենահաւատարիմ հետեւողներ է գտնում հեռագէտէ:

Մօտաւորապէս կարելի է ասել որ միայն Աֆրիկայում Սենուսիի հետեւողների թիւը հասնում է 9 միլիօնի և բաւական է, եթէ նա մի նշան տայ և ապստամբութիւնը բռնկէ ամբողջապէս ոչ միայն Աֆրիկայում, այլ և Արաբիա—

յում և Հնդկաստանում: Անկասկած Սենուսին սպասում է մնայն յաջող ընդհանուր վարդապետութեան յաղթանակի համար:

Իրերի այսպիսի գրութիւնը համեմատութեան գործը, առնուազն, շատ է դժուարեցնում:



ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ՔԱՐՈՉԻՉՆԵՐԻ ԴԵՐԸ,
ԶԻՆԱԿԱՆ ՅՈՒՉՈՒՄՆԵՐԻ ՄԷՉ:

Չինաստանում վերջին ամիսներս տեղի ունեցած մեծ յուզումները, որոնք ուրիշ են հանել ամբողջ քաղաքակրթութեան աշխարհը և ընդհանուրի հետաքրքրութեան կենդրոն դարձրել՝ իրերի բնական բերմամբ պատճառեղան շարժելու ի միջի այլոց այն հարցը, թե՛ ինչ չափով արդեօք այդ յուզումների շարժառիթ կարելի է համարել քրիստոնէութեան քարոզութիւնը և ո՞ր դաւանութեան կամ ո՞ր ազգի պատկանող միսիոնարների վերայ աւելի ծանր պատանախնայութիւն է ընկնում: Առանձին ուշադրութեան և տաք բանական առարկայ եղաւ այս նկատմամբ անգլիական նախարարապետ Լորդ Սալեսբորիի ձառը, որ նա խօսեց «Արտասահմանում» աւետարան տարածելու ընկերութեան» երկհարիւրամեայ յորելեանի առթիւ: «Հին ժամանակի եկեղեցւոյ մէջ, ասում էր նա, մեծ աւետարանիչներ քարոզութեան էին կենում սոսկալի վտանգների դէմ՝ գնալով և տանում էին այն բոլոր սարսափները, որ նոցա վերայ թափել կարող էր աշխարհը՝ ի պաշտպանութիւն իրենց քարոզած վարդապետութեան և ուսուցած բարոյականութեան: ... Երբ միջին դարերում Բոնիֆատիոսի կամ Կոլումբանի * պէս մի միսիոնար քարոզում էր՝ ամէն դժուարութիւն իւր վրայ էր ընդունում, յանձն էր առնում մարտիրոսական մահ, տանում էր արիարար այն տանջանքները, որոնց ենթարկում էին իրեն, և նորա անձնութեան ամբողջ բարոյական և հոգեոր տպաւորու-

թիւնը անարդէլ կերպով ներգործում էր շրջապատողների վերայ: Բայց եթէ այսօր այդպիսի մի Բոնիֆատիոս կամ Կոլումբան մարտիրոսութեան ենթակայ լինի՝ անմիջապէս կղիմեն հիւպատոսին և շուտով մի դրահակիր նաւ կգայ. — դժբաղդարար այդ դրութիւնը փոխել էլ կարելի չէ: Թէպէտ ոչ ոքի համար պախարակելու բան չկայ այստեղ, թէպէտ ամէնից քիչ մեր միսիոնարներին կարելի է սորա համար պախարակել, թէպէտ ես թոյլ չեմ կարող տալ, որ աշխարհական իշխանութիւնը մեղադրելի համարուի, որ իւր հպատակների կողմից վրէժխնդիր է հանդիսանում սակայն և այնպէս այդ հանգամանքը քրիստոնէական ուսման զուտ հոգեոր վարկն ու ներգործութիւնը շատ է պակասեցնում: Մարդոց համար մի առիթ է սա և փորձութիւն՝ քրիստոնէական ուսման մի որոշ նշանակութիւն տալու և այնպիսի բաներ կասկածելու, որոնք շատ հեռու են նորա քարոզների մտքից: ... Աչքի առաջ ունեցէք ահա Չինաստանը՝ նկատեցիք, որ բոլոր սպանուածները քրիստոնէայ են: Երեւակայում էք արդեօք, թէ նոքա այն պատճառաւ են սպանուած, որ չինացիք տուում են նոցա կրօնը: Սակայն ո՞չ մի ժողովուրդ երկրիս վերայ այնչափ անտարբեր չէ կրօնական խնդիրներում որչափ չինացիք: Ինչ որ տեղիք է ունեցել պատճառն այն է, որ նոքա ինչպէս և ուրիշ ազգեր, այն դադափարն են կազմել, թէ միսիոնարի գործը լոկ գործիք է միայն աշխարհական իշխանութեան ձեռքում: սորա աչքի առաջ ունեցած նպատակներին հասցնելու համար: — Ոչ ոք այնչափ զերծ չէ կողմնակի նպատակներից, որչափ այս ափից հեռացող միսիոնարները: Սակայն այդ իրողութիւնը չէ պակասեցնում այն իրական վտանգը, որ նոցա դէմ եղած կասկածից յառաջ է դալիս և որի հետեանքը այնպէս արիւնալի պատկերով ահանում էք ներկայ վայրկեանին, երբ խօսում եմ ձեզ հետ: Թոյլ կտամ խրատական կողմի վերայ մասնացոյց անեմ, զգուշութիւն և խոհեմութիւն՝ անձնութեան և ոգեորութեան պատշաճաւոր սահմաններում — պէտք է համարուեն միսիոնարների պարտականութիւնը օտար երկրի մէջ, որոնք միայն աւետարա-

* Գեմանիոյ եւ Զուիցերիոյ առաջնախններ: